

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուրլ, կես տարվանը 6 բուրլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Օտարադարձացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мшак»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունւում է ամեն լիզուով:

Յայտարարութիւններ ինչպէս վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Թիֆլիսէն: Արտաքին լուրեր:—ԽՈՒՐԵՆ ԼՈՒՐԵՐ:—ՀԵՌԱՅԻՆ ՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲՈՐՈՍ:—ԲԱՆԱՍԻՍԿԱՆ: Խաչատուրի յիշատակարան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մենք ստացանք հետեւեալ նկատողութիւնը, որ և խնդրում են մեզ դիմել մեր լրագրի էջերում: «Չեմ պատկանում լրագրի միջոցով ԲԱՅՈՒՆԻՑ տիկին Թարսիսիանայ խնդրում է որ իրան յայտանին խնայող անձինք իր որդի Արիստիդ Թարսիսիանայի ուր լինելու մասին: Ուստի յայտնում եմ որ պարտք ապրում է Արաղլիայում: Այդ նկատողութիւնը, որ մենք ստացանք, ստորագրւած է Ն. Ի. զլխատառերով:

«Արարատ» ամսագրի դեկտեմբերի տետրակի մէջ հրատարակւած է այդ ամսագրի ունեցած բաժանորդների թիւը 1882 թիւ ընթացքում: Յայտնւում է որ «Արարատ» բաժանորդների թիւը եղել է 1775, այն ինչ մենք յիշում ենք որ մի քանի տարի առաջ այդ ամսագրի բաժանորդների թիւը հասնում էր 2,000 հոգու: Յայտնի է որ «Արարատ» բաժանորդների մեծ մասը պարտադիր բաժանորդներ են, այն է ամեն աստիճանների հոգեւորականները: Բայց և բաժանորդագրութիւնը պարտադիր լինելով, բաժանորդների թիւը հետզհետեւ նուազում է:

ԽԱՉԱՏԱՐԱՐՈՒ

ՅԻՇԱՏԱՎԱՐԱՆԸ

Երեւում է, կենսի մէջ ճշմարտութիւնը այնքան անհրաժեշտ է մարդու համար, որ ամենաստարակիւ չարացործն անգամ պէտք է ունենայ գոնէ մի բարեկամ, որի հետ պէտք է անկեղծ լինի: Քաւոր Պետրոսի յարաբերութիւնները յիշեալ սեղանաւորի հետ թէև խսկութեամբ այսպէս չէին, բայց նա դարձեալ պահպանում էր բոլոր ճշտութիւնները, ինչ որ վստիկ են մի բարեկամի, մի ազնիւ մարդու: Սեղանաւորը մեծ վստահութիւն ունէր նրա հաւատարմութեան վրա, մասնաւոր այն պատճառով, որ համարում էր նրան միամիտ, բարի և ճշմարտասէր մարդ: Ամեն անգամ, երբ յայտնւում էինք այդ քաղաքում, սեղանաւորը մեզ հրաւիրում էր իր տանը: Նրա կինը, երեխաները, աղայիները, սպասաւորները բոլորը ճանաչում էին քաւոր Պետրոսին:—Եւ բոլորի համար քաւոր Պետրոսը ունէր անուշ խօսքեր, զբաղեցնելու, ծիծաղելու և գրաւելու համար:

Նրանք սիրում էին լսել քաւոր Պետրոսի ճանապարհորդութիւնների պատմութիւնը: Այդ թափառական հրեան համարեա ամեն երկրում եղել էր և ամեն երկրի մասին կարող էր պատմել նրանց շատ հետաքրքիր տեղեկութիւններ: Թէև երբեմն նա առասպելներ էր պատմում, այսուամենայնիւ, մեծ ուշադրութեամբ լսում էին: Օրինակ, միանգամ ասում էր, թէ Հնդկաստանում մի կղզի կայ, որտեղ ոսկին ծնունդից նման գետնից բուսնում է, աճում է և ճիւղեր է արձակում:

—Այդ լաւ է, ասաց սեղանաւորը զարմանալով: —Կարելի է գնալ այնտեղ և քաղել մի ամբողջ ոսկու հունձը:

—Եթէ հնչւած լինէր, ամեն մարդ կը գնար, պատահանեց քաւոր Պետրոսը ժպտելով:

—Ինչ դժուարութիւն կայ:

ՎԱՂԱՐՇԱՊԱՍՏԻՑ մեզ գրում են: «Յունական 16-ին տեղիս թատրոնատէրների խումբը տղայացի դպրոցի դահլիճում տուեց մի ներկայացում և դուռ արդիւնք ստացվեցաւ 100 բուրլ: Այս դեպքում Հնորակալութեան արժանի է տղայացի դպրոցի հոգաբարձու Տէր-Վաղարշանց, որ տուեց տուճն պտտելով, ծախում էր տոմսակները»:

Նայն տեղից մեզ գրում են: «Եւֆրատի միաբանութիւնը մի խնդիր է առաջարկել Սինդիկ, որպէս զի շատացան միաբանների ուժերները, ընդունելով իրանց վրա բոլոր ծախսերը, բացի ճաշից: Բայց զարմանալին այն է, որ Սինդիկ անձանքն էլ ստորագրել էին այդ խնդրագրի տակ, ինչպէս միաբաններ, չը մտածելով որ նայն խնդիրը իրանց ևս առաջարկում, որպէս սինդիկականներն»:

ԲԱՅՈՒՆԻՑ հետեւեալ հեռագիրը ստացանք: «Մարգարիտական ընկերութեան ընդհանուր ժողովի նիստը յետաձգւած է փետրվարի 12-ի օրը, յարգելի պատճառներով»:

Ստացանք Մոսկվայից «МОСКВА» ամսուով պատկերազարդ ուղևորական շարժաթիւների այս տարվայ առաջին համարը, որ հրատարակում է մեր հին ծանօթ, «Կավկաս» լրագրի նախկին խմբագիր Կ. Ստալինսկին: Այդ պատկերազարդ շարժաթիւները մենք տեսնում ենք պ. Ստալինսկուց փոխադարձապէս նրան մեր թերթին ուղարկելով:

Այսօր «Մշակը» ունի 1050 բաժանորդ:

—Շատ դժուարութիւններ:—Աղղին կախարդւած է: Նաեւոր հաղիւ կարող են մօտենալ նրա եղբրին: Է՛հ այդ որ մօտեցան, ստակալի ալիւթո՞ւթիւնը կը տանէ նրանց դէպի ուղիւստի յատակը: Պատահե՛լ է, որ մարդիկ ալիւթո՞ւթիւնից ևս աղաւթելով, դուրս են եկել նրա դամբարանի վրա: Բայց այդ մարդիկը այլ ևս չեն վերադարձել. նրանք կերպարանաւորվել են, կապիկներ են դարձել և մնացել են այնտեղ:

—Ուրեմն ոչինչ հնար չը կայ այնտեղ գնալու: —Ինչպէս չը կայ. միայն պէտք է գտնել կախարդված կղզու թիկնամանը: Հաղարաւոր ըրաւ միմեք ընտանի են գրեթե, աշխատում են լուծելու թիկնամանը, բայց դեռ ոչինչ հետեւաբեր չեն հասել: Անգլիացիք միլիոններ կը տային, եթէ մէկը գտնելու լինէր անմատչելի կղզու կախարդական բանալին:

Յետոյ պատմում էր նա, թէ մի այլ կղզում (դարձեալ Հնդկաստանում) գտնւում են այնպիսի հակալ մըլճիներ, որ մարդիկ նրանց մէջքի վրա թափել են դնում, նրանց բերանը սանձ են դնում, և ձիւն նման նստում են նրանց վրա, ուր որ կանգնում են, գնում են: Եւ քաւոր Պետրոսը խիստ ծիծաղելի կերպով նկարագրում էր իր մի հետաքրքիր ճանապարհորդութիւնը մըլճի մէջքի վրա նստած: Զարմանալին այն էր, որ նրա լսողները այնքան փոքր տեղեկութիւններ ունէին հեռու երկրների մասին, այնքան սակաւ ճանաչում էին երկրագունքը, որ բոլորովին հաւատում էին նրա պատմածներին:

Ահա այսպիսի և դրա նման պատմութիւններով էր զբաղեցնում քաւոր Պետրոսը իր ունեւորդներին:

Իր հաշիւների մէջ քաւոր Պետրոսը վերին աստիճանի ճիշտ էր սեղանաւորի հետ: Շատ անգամ նրանից բաւական խնդր գումարներ էր փոխ առնում, իբր թէ մի առեւտրական ընդարձակ ձեռնարկութեան համար: Բայց ինձ յայտնի էր, որ քաւոր Պետրոսը ոչ փողի կարօտութիւն ունէր և ոչ առեւտրական ընդարձակ ձեռնարկութիւններ: Նա վեր առած գումարը այնպէս անշարժ պա-

րկիւնանից, պ. Սարգիս Տէր-Պողոսեանց գրվելով «Մշակին» և ուղարկելով մեզ 10 բուրլ, մի նոյն ժամանակ ուղարկել է մեզ և աւելորդ 1 բուրլ, որ պէտք է միացնել այն մի մի բուրլներին հետ, որոնք պէտք է գոյացնեն մի աւելորդ լաժանորդագիր, մի որ և է ուսումնարանին ձրիապէս մեր թերթը ուղարկելու համար:

ՎԱՂԱՐՇԱՊԱՍՏԻՑ, տիկին Խան-Աղեանցից ստացանք հետեւեալ նամակը, ըստն և հինգ բուրլ փողով: «Անցեալ տարի հանգանակութիւն բանալով յօգուտ Կ. Պօլսի հայոց Միացեալ Ընկերութեան, ժողովից 25 բուրլ, որ այժմ ներկայիւ շամալիս մէջ, ուղարկում եմ պատական լրագրի, խնդրելով հասցնել այդ գումարը վերոյիշեալ ընկերութեանը, հրատարակելով նուիրատուների աւանդները, որոնք են. տ. տ. Խան-Աղեանց, Թաղանոսեանց, Աֆանասեանց, Տէր-Յովսէփեանց և պ. Տէր-Մինասեանց, իւրաքանչիւրը հինգ բուրլ»:

Դօկտոր Աւետիք Արամյանեանց խնդրում է մեզ յայտնել որ իր երբորը զատակոտութիւնը քաղաքական անտեսութեան վրա, նա կարգաւոր է Արծրունու թատրոնի դահլիճում ոչ թէ առաջիկայ շարժի օր, փետրվարի 5-ին, այլ եկող շարժի երկուշաբթի, այն է փետրվարի 12-ին:

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են որ ներքին գործերի միջնորդութիւնը չը հաստատեց Մոսկվայի հայոց բարեգործական ընկերութեան ծրարիքը, և միմիտոր կոմ Տօլստոյ բերում է այդ իր կարգաւորութեան համար հետեւեալ շարժաթիւները. նախ որ Մոսկվայում արդէն կան բաղմամբ լաւ բերդործական ընկերութիւններ, որոնց նպատակն

հում էր իր մօտ, մինչև լրանում էր իր տուած պարտաւորակի ժամանակը: Այդ միջոցին տաւում էր փողը, իր տօկոսով յետ էր տալիս, պարտքը վճարում էր և ստանում էր պարտաւորակը: Այդ անում էր նա իր վարկը պահպանելու համար:

Միանգամ մեզ հարկաւորեց վեր առնել սեղանաւորից 15,000 բուրլ: Փողերը բերեցինք մեր ինչեանը, կրկին համարեցինք, տեսանք, որ 1000 բուրլ աւել է: Սեղանաւորը փոխանակ 15 հազար բուրլու, սխալմամբ տուել էր 16 հազար բուրլ, իսկ 15-ի պարտաւորակ էր առել: Քաւոր Պետրոսը միւս օրը հազար բուրլը յետ տարաւ, յանձնեց սեղանաւորին այսպիսի դանդաղութիւն:

—Այդ ինչ արեցիք դուք ինձ հետ, Արկաղի Ֆադէի, այսպէս էին կոչում սեղանաւորին:—Եթէ ես այս դիւշեր մտնելու լինէի, ինչ կը լինէր իմ հոգու ճարը: Երեւի, դուք իմ հոգին կորցնել էիք ողորմ...:

Սեղանաւորը մնաց զարմացած:

—Ինչ կայ, ինչ է պատահել, Պետրոս Արամի, հարցրեց նա, խնդրելով վերոկված քաւոր Պետրոսին նստել:

Պետրոս Արամիչը ոչինչ չէ խօսում, լուռութեամբ դնում է սեղանաւորի առջև 1000 բուրլ:

—Այդ ինչ փող է, հարցնում է սեղանաւորը:

—Այդ այն փողն է, որ դու ինձ աւել էիր տուած, պատասխանում է քաւոր Պետրոսը դեռ ևս վրդովված կերպով:—Աւելի լաւ կը լինէր, որ համարքի մէջ զգոյշ լինէիք և ուրիշին մեղքի մէջ չը դնէիք...:

—Իւր բարի ես, շատ բարի, Պետրոս Արամի, ասում է սեղանաւորը, բարեկամաբար նրա ձեռքը սեղմելով:

—Իս բարի եմ նրա համար, որ չը գողացայ ուրիշի փողը:—Այդ բարութիւն չէ, Արկաղի Ֆադէի:

Չը նայելով այդ համեստութեանը, Արկաղի Ֆադէիչը աշխատում է ապացուցանել, որ Պետրոս Արամիչը բարի մարդ է:

Ամեն անգամ, երբար թափառումներէն յետոյ,

է օգնութիւն հասցնել ամենայն աղղի, լեզուի և կրօնի աղքատներին, երկրորդ որ իւրաքանչիւր հայոց եկեղեցու ծովը <de facto> իսկապէս ունի իր բարեգործական ընկերութիւնը, ապա ուրեմն աւելորդ է Մոսկվայի հայ գաղթականութեան համար հիմնել մի առանձին ընկերութիւն վերոյիշեալ նպատակով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒՅԱՅԻՑ

Կ. Պօլս 13 յունվարի

«Մամուլի» խմբագիր պ. Ալիպաեան (եղբայր պ. Արր. Ալիպաեանի) դեռ բանտն է: Պատրիարքարանը ուղեց միջնորդել, պատասխան առաւ թէ՛ նախարարաց ժողովը կը դադարէ այս խնդրով:— «Մամուլը» հրատարակած էր ոտանաւոր մը զոր մի պատանի կարգացած էր Կիւրինի դպրոցի պարգեւաւորութեան հանդիսի մէջ, անցեալ սեպտեմբերին: Այս այն ոտանաւորներէն մին է որուն մեր ականջները վարժ են: Այդ ոտանաւորները չունեն գրական մեծ արժէք, սակայն չենք արհամարհել զանոնք. ազնիւ զգացմանց ներշնչումներ են: Ո՞վ մեղմէ չէ դրած այդպիսի ոտանաւորներ տաան և հինգ տարեկան եղած առնու, այն տարիքին մէջ ուր պատանիին սիրտը կը սկսի բարակել ազնիւ զգացումներով: Եւ երբ տարիներ կը սանձն ու պատրանքներ կուզան խռովել երիտասարդին սիրտն ու հոգին, ինչ քաղցր է թերթիւ երբեմն հին տետրերը, միւլթարութիւն որոնք անուշ յիշատակներու մէջ:

Երբ յայտնվում էինք սեղանաւորի մօտ, նրա սովորական հարցմունքն այդ էր լինում:

—Լաւ ևս ստաւ ունեցար, Պետրոս Արամի:

—Վատ են գնում գործերը, շատ վատ, Արկաղի Ֆադէի:

—Ի՞նչու:

—Բոլորը մեր մեղքերից:

Սեղանաւորը ծիծաղում է:

—Դուք ծիծաղում էք, Արկաղի Ֆադէի: Բայց տեսէք, ինչպէս վատացել են ժամանակները. առանց երկրելու, առանց սուտ խօսելու չես կարող առեւտուր անել... Բայց այդ մեղք է, Արկաղի Ֆադէի, շատ մեղք է... Համարեա մարդ իր հոգին է ծախում...:

—Բայց չան, այսու ամենայնիւ, լինում է:

—Ինչ չան... այսպիսի չանք Գուգայի արժանի է, որ ստացաւ և մասնեց մեր Տէր Յիսուս Քրիստոսին: Այսպիսի չանք ստանան կը տանէ...

Չը նայելով յայտնած դժգոհութեանը վատ ժամանակների և իր առեւտրական անյաջողութեան մասին, քաւոր Պետրոսը դարձեալ համարում է սեղանաւորի առջև մի քանի հաղարներ:

—Այս անգամ, երեւի, ստանան չէ դիպել քո փողերին, Պետրոս Արամի:

—Քրտնորով է աշխատած, դուռն քրտնքով, Արկաղի Ֆադէի:—Արդար աշխատանքը Յիսուս Քրիստոսը կը պահպանէ, պատասխանում է քաւոր Պետրոսը և սկսում է ջերմումանդութեամբ խաչակրքել իր երեսը:

Սեղանաւորը երբեմն սիրում էր քաւոր Պետրոսի հետ համարներ անել և դուրճանալ նրա պարզամտութեան վրա:

Բայց ինձ զարմացնում էր քաւոր Պետրոսի հաւատարմութիւնը, որ ունէր գէպի սեղանաւորը: Այդ մարդը, որի համար ոչինչ սուրբ բան չը կար, վարվում էր նրա հետ ամենայն ճշմարտութեամբ: Եւ կարծում էի, թէ դա մի խորամանկ նախապատրաստութիւն է, սեղանաւորին մեր ծուղակի մէջ զցելու համար, որի հարստութիւնը միլիոններ էր հասնում: Միանգամ հարցրի քաւոր Պետրոսից.

(Կը շարունակվի)

մը երբ նոյն իսկ այսպիսի օրեր երեսի վրայ կը
կը գտնուին թիւերի հայտը կեդրոնական իշխանու-
թեան գրադիրները, ծառայները և այլն:—Ինչ կ-
րեստով պատրիարք մը հրամայէ աշխատել անոնց
որոց ուսուցիչ հայ չէ կարող տալ: Այս ատանկ
ըլլալով ազգը շատ յոխորտանօր պահանջուներ
չէ կարող ընել պատրիարքէն:

Երկէ նամակս ձգելէ վերջ ուշ ատեն լուր
տուին մեզ թէ մեր «Ընդ ծով և ընդ ցամաք»
թափառական Ուիլիսուս պ. Յարոյն վերջի օրերս
տեսնուած է Չմիւսնիոյ ծովափանցը վրայ: Այդ
գաւառին առաջնորդն է Մարտիան եպիսկո-
պոսը, մին կաթողիկոսական ընտրելիներէն: Հոն
են նաև ոմանք այն դերասանուհիներէն որը եր-
բեմն ձեռն իւր կողմէն Մնացածը դուր խորհեցէք:
Հայկակ

ԱՐՏԱՐԻՆ ԼՈՒՐԵՐ

—Յրանսիական լրագիրներում շարունակվում է
քննադատվել երկրի ժամանակակից դրությունը,
և միապետական լրագիրները ապացուցանում են,
ի հարկէ, որ հանրապետութիւնը կործանվում է,
որ պատգամաւորները ժողովը գլուխը կորցրել է,
և այդ հիման վրա միապետականները մեծ յայեր
ունեն: Այդ բանին «Republique Franç.» լրագի-
րը պատասխանում է նրանց հակահարկ: Միապե-
տականները լրագիրներում շատ ազնուկ են հա-
նում այն պատճառով, որ ներկայումս մամուլի
ազատութիւնը կատարելաւ է, և հանրապետական-
ները վճռեցին ուղարկութիւն չը դառնալ լրա-
գրական յօդուածները վրա: Բայց եթէ զործողու-
թիւններ կը լինեն, այն ժամանակ միապետա-
կանները շուտով իրանց վրա կը փորձեն, որ
հանրապետութիւնը չի թողն առջ, որ իրան ոչնչ-
չայնին, և չի զիջի իր տեղը միապետականները:
Ինչ որ իշխաններին է վերաբերում, նրանք չեն
կարող հասարակ քաղաքացիներ համարվել: Այդ-
պէս է նրանց ծննդան և կրթութեան ճակատա-
գրական նշանակութիւնը, և բոլորը, ինչ որ նրանք
գործում են և ասում են, բոլորը ցոյց է տալիս,
թէ նրանք իրանց իշխաններ են համարում, աշ-
խարհն այնպիսի անձինք, որ կանգնած են ընդ-
հանուր օրէնքից դուրս: Ամենաճարտար ատենա-
բանութիւնների մէջ հետաքննողը մտածում են
այդ բանի մասին, այն ինչ դա շատ նշանակու է,
չէ որ ասում են հանրապետականներից շատերը,
թէ իշխաններն էլ նոյնպիսի քաղաքացիներ են,
որպէս և բոլոր մնացածները:

—Օրինակներով լրագրում տպված է մի նա-
մակ, որ մի քանի օր առաջ գրել է կոմս Դամ-
բոր դը-Պան դը-Վաի մահուան առիթով, որ մինչև
այդ ժամանակ օրինականների առաջնորդ էր իդե-
րում: Այդ նամակը ուղարկութեան արժանի է:
Կոմսը բողոքում է այն «հեթանոսական պատիւ-
ների» դէմ, որ արվեցան Վալմիտայի նրա մա-
հուան ժամանակ, և որոնց մէջ մասնակցում էր
դոբրը: Միապետութեան հաւատարմ ծառան շատ
յարմար ժամանակ մտաւ, որ չը տեսաւ զինուոր-
ների ստորախալը: «Ինչպէս երևում է, կոմսը և
նրա մերձակները, ասում է «Temps» լրագիրը,
ապրում են առանձին աշխարհի մէջ, ուր ամեն
առարկաները նրանց ներկայանում են երևակա-
յութեան մէջ: Նրանք կատարելապէս չեն ճանա-
չում զօրքի ոգին, եթէ մտածում են, թէ նա իր
համար ստորութիւն էր հոմարի մասնակցից Վալմ-
իտայի թաղմանը... Գամբիլտան մեծ ժողովը-
դականութիւն ունէր զօրքի բոլոր շարքերում:

—Փետրվարի 15-ին, անգլիական պարլամենտի
բացման օրը, Բրէյլը կամենում է մինչև այժմ
չեղած մի մեծ միտքից կազմել Տրաֆալգար-սկիւ-
րում: Նրա նպատակն է ստիպել համայնքների
ժողովին, որ այդ վերջինը ընդունէ նրան որպէս
համայնքների ժողովի անդամ, և այդ բանի հա-
մար ամբողջ խոսքեր կը մանեն պարլամենտի
չինութեան մէջ:

—Բաղբարկից լրագիրներին հաղորդում են, որ
Տօգոր Սոմոսօվ, պետական խորհրդի նախկին
նախագահը, այս օրերս բուլղարական լրագիրնե-
րում մի նամակ հրատարակեց, որի մէջ յայտ-
նում է, որ իշխանութիւնը անյուստից գրութեան
մէջ է գտնվում, և որ ոչ մի տեսակ փոփոխու-
թիւն միջնորդութեան մէջ չէ կարող միջնորդու-
թիւնը բարեկարգ դրութեան մէջ դնել, մի և
նոյն ժամանակ նա աւելացնում է, որ ներկայ
ազգային ժողովը անգոր է ի նկատի առնելով
իշխանին ծառայող հոգեպէս թող մարդկանց, և
որ փրկութեան միակ միջոցը կը լինէր կազմել

ազգային մեծ ժողով սահմանադրութիւնը վերա-
քննելու համար:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Վերջին 20 տարիների ընթացքում եւրոպայի
զանազան պետութիւնների մէջ լինել էին զանա-
զան դաս ակնկալողներ (պրէտենդենտ), որոնք չէին
զապաւում բողոքելուց և պահանջում էին, որ ի-
րանց իրաւունքները ճանաչեն այն պետութիւն-
ները, որոնք մի ժամանակ թագաւորել էին ի-
րանց նախնիները: Բայց 1870—1871 թվերի
անցքերը կարծես միանգամից վերջ դրին դա-
սակնկալողների այդ օտարոտի պահանջներին:
Գերմանական դաճնկէց արած թագաւորները հա-
կացան, որ Պրուսիայի յաջողութիւնները և վեր-
ջէն թագաւորի կայսր հրատարակվել խոստ են
նրանցից որ և է յայտ իրանց կորցրած թագը ձեռք
երկրու համար: Յրանսիայում դաճնկէց եղած
Բոնապարտների, Բուրբոնների և Օրլէանների թա-
գաւորական ցեղերի թշնամութիւնը կատարելա-
պէս թուլացրեց միապետական կուսակցութիւն-
ների գործունէութիւնը, Սպանիայում Ալֆոնսո
XII-դի թագաւորական դաս բարձրանալը և դոն-
կարլոսի ապստամբութեան անաղիւղութիւնը վե-
րականցեց իր կարգը և վերջ դրին դաս ակնկա-
լողների ինտրիգներին: Նրանցից յետոյ, երբ վեր-
աւոր-Լեմանուէլ թագաւորը իր գործերով Հոսիւ
գրաւեց, իտալական դաս ակնկալողները ձեռք
վերցրին իրանց տանու տուած գործից և այժմ
աշխատում են ազգայնականութեան կապիւր կապել
ստիպան թագաւորական ցեղի հետ: Գոն-Մի-
գէլ պորտուգալացին դեռ ևս 1866 թվին վախ-
ճանկեցաւ, զանազան կարագործիքներով, Գիլ-
ները, Սկանդերբերգները, Վալաները և այլն
ուր որ անհետացան, Զարտոթիկի իշխանները
այլ ևս չեն յիշում իրանց իրաւունքները մասին
Լեմանուէլի դասի վրա, հանդիսացաւ Օտոման թա-
գաւորի ժառանգը բոլորովին չէ երազում Յունաս-
տանի թագաւորը դառնալ: Միակ դաս ակնկալու-
ղը, որ 1871 թվից չէ դադարում իր թագաւորա-
կան իրաւունքների մասին յիշեցնել, մնում է ներ-
կայ բոլորում կոմս Դամբոր: Նրա հակառակորդը
մինչև վերջին ժամանակները իշխան Լուի-Բոնա-
պարտ էր, որը, մի քանի տարի առաջ, տարա-
ժամ մահուան դոն դոնց Հարաւային Աֆրիկայում
Այդ դաս ակնկալողի մահուան ժամանակից, որից
յետոյ բոնապարտիստները երկու միմեանց թշնա-
մի բանակների բաժանվեցան («Երբ միմեանց» և
«Վիկտորիաներ»), կոմս Դամբոր առանց հակա-
ռակորդի մնաց, և 1873 թվին յաջողեցրեց իր
իրաւունքները ճանաչել տալ Օրլէանեան իշխան-
ներին (բացի միայն Օմալեան դքսից) և յայտնեց
իր օրինական և ուղիղ ժառանգ փարիզեան կոմ-
սին, Լուի-Ֆիլիպ թագաւորի թոռան: Կոմս Դամ-
բորը ներկայ բոլորում 63 տարեկան է: Իր բոլոր
նախորդների նման, սկսած Լուի-Փիլիպ XV-ից,
նա ժառանգեց դասի վրա իրաւունքները ոչ որ-
պէս ուղղակի յաջորդ նախնիներից թագաւոր-
Բուրբոնեան ցեղի այժմեան գլուխը, կարդուս
X-դ թագաւորի թոռն է, բայց ոչ թէ նրա ա-
ւագ որդուց, որը օրէնքով նրա ուղիղ ժա-
ռանգն էր: Այդ աւագ որդին, որը սկզբում կրում
էր «Գոֆրի» իսկ յետոյ Անդրէասեան դքսի
տիտղոսը, հրաժարվեց ից դասի վրա ունեցած ի-
րաւունքներից յօդուս իր կրտսեր եղբոր, որդու,
Բէրրեան դքսի, որ ծնվեց, երբ արդէն այդ իշխա-
նը սպանված էր Լուի-Ֆիլիպ ձեռքով: Այսպիսի ծնունդ-
ի պատճառով «Երաշքի երեխայ» անուանվելով
(l'enfant du miracle) Հնդկիստ - Դարլ-Ֆիլիպ
նանդ-Մարիա-Վիլհելմին զ'Արտուա, դուքս Բուրբոն,
1830 թվին, երբ տասն տարեկան էր, հեռացաւ
Յրանսիայից, և այդ ժամանակից այլ ևս այնտեղ
չը վերադարձաւ: 1846 թվին նա պաակվեց Աւ-
ստրիայում Մոգիսեան այն ժամանակվա դքսի,
Յրանցիկոս IV-ի աղջկայ իշխանուհի Մարիա
Թէրէզայի հետ: Այդ պատիւը անդամակալանութե-
ան: Յրանսիական օրինակները, այնու ամեն
նայնիս, ակնարկում են, որ այդ պատիւն ան-
պաղտութեան մէջ Հնդկիստ V-ը չէ մեղաւոր, և
պարծանքով պատմում են, որ «Նորին մեծութիւ-
նը» մի քանի խորթ որդիք ունի, աւելացնելով որ
այդ բանը չէ արգելում «արքայազն ամուսնուն-
քին» կատարելաւ համաձայնութեան և ամուսնու-
քից «բարեկամական» յարաբերութիւնների մէջ
ապրել: Թէ որքան ճիշդ են պատմութիւնները
«enfants de France»-ի գոյութեան մասին, որպէս
ընդունված էր անել Լուի-Փիլիպ XIV-ի ժամա-
նակ, մենք, ի հարկէ, չը գիտենք, բայց կարող

ենք միայն յայտնել, որ նրանց գոյութեան մասին
պնդում են միայն օրինակներն էր, այն
ինչ հանրապետականները, բոնապարտիստները և
մինչև անգամ օրէնականները դրականապէս այդ
բանը հերքում են: Հնդկիստ IV-ի Աւստրիայում
անցկացրած հանգիստ և ուրախ կեանքը վատ նը-
շաններ թողին նրա դէմը և դժգոհութեան վրա
այն արտաքին տեսքի տեսակէտից, որ անհրաժեշտ
է «գաս ակնկալողի» համար: Կոմս Դամբոր կաղ
ծնվեցաւ, և այդ կաղութիւնը, չը նայելով բոլոր
արուեստական միջոցներին, սաստիկ նկատելի է
նրա քայլուածքի մէջ մինչև այժմ: Այդ հանգա-
մանքը նրան միշտ ստիպում էր խոստովան ման-
գաւուց, բայց ձիով չըլնէլէն էլ սաստիկ և շուտ
յոյնեցնում է կոմսին, այնպէս որ նա ձիու վրա
է նստում միայն դրօսանքի համար, որ խորհուրդ
կրում Բուրբոնեան ընտանիքի ժառանգական գէ-
րութիւնից: Գաս ակնկալողի դժգոհութիւնը բաւա-
կան ակնարկէ է, բայց ապացնում է իր ապա-
տիպով, որ յաճախ մի տեսակ քնած արտաքայ-
նութիւն է ընդունում: Վստահութեան ոգի բոլոր-
ովին չը կայ կոմս Դամբորի մէջ: Նա, ի հարկէ,
միշտ պատրաստ է, ինչպէս և իցէ, դրաւել Ֆրան-
սիական դասը, եթէ այդ դասը նրան կառաջարկ-
վի կատարելաւ ապահովութիւն ունենալով, որ ոչ
որ արգելք չի լինի նրա թագաւորութեանը:
Բայց իշխանութիւնը ձեռք բերել յանդուրդ ար-
կածների ճանապարհով կոմս Դամբոր երբեք չի
համաձայնվի: 1873 թվին, շուտով թիւեր ընկնե-
լուց յետոյ, օրինականներին յաջողեցաւ համոզել
կոմսին, որ նրա թագաւորութեան համար բարե-
յաջող բոլորէն, վերջապէս, հասնէ է: Այսպէս
Յրանսիայից հեռու և այնտեղ կատարված անց-
քերի մասին տեղեկութիւնները իր համախոհներից
հաւատալ այն ամենին, ինչ որ նրան ասում էին:
Վերապէս ազգային ժողովում հանրապետական-
ները փորձաւորութիւն էին կազմում, իսկ բո-
նապարտիստները միայն մի քանի մարդիկ էին:
Օրլէանականները համաձայնեցան ձեռք ձեռքի
տուած քնու օրինականների հետ նրանից յետոյ,
երբ կոմս Դամբոր ճանաչեց իր ժառանգ փարի-
զեան կոմսին: Գործը, կարծես թէ, դրստված էր:
Արդէն փարիզի ամենալաւ կառք շինողներից մե-
կը մեծ դաղնիք պահելով պատրաստեց հանգիստ-
ուր կառքեր, որոնցով «թագաւոր» հանդիսաւոր
մուտք պէտք է գործէր իր մայրաքաղաքում, երբ յան-
կարծ ամեն բանը քանդվեցաւ այն պատճառով, որ
կոմս Դամբոր չը համաձայնեցաւ պահպանել զօրքի
մէջ նրանց երեքգոնեան դրօշակները, իսկ հան-
րապետութեան նախագահ Մարշալ Մակ-Մահոն
յայտնեց, որ Ֆրանսիական զօրքը երբեք չի թողն
առջ, որ նրանից իսկն այդ երեք-գոնեան դրօշակ-
ները, որոնց տակ նա կատարել է այնքան մեծա-
մեծ գործեր և տարել է այնքան փառաւոր յաղ-
թութիւններ: Իր ժամանակին շատ խօսկեցաւ այն
զարմանալով «անձնուրախութեան» մասին, որով
կոմս Դամբոր գոնեց այդ օրակէն զանք հաւատա-
րիմ մնալու համար այն «սկզբունքներ», որի խոր-
հրդանշանը համարվում է Բուրբոնների սպիտակ
դրօշակը: Բայց, իսկապէս, շատ հաւանական
փաստեր կան, որոնցով ապացուցվում է, թէ ըս-
պիտակ դրօշակը միայն մի առիթ էր պատ-
ւով յետ քաջկերտ համար, որպէս և վճռեց վար-
վել կոմս Դամբոր, երբ պատասխան ստացաւ իր
զաղանի չըլնեցեալների, որ ուղարկել էր եւրօպա-
կան բոլոր պետութիւններին և որի նպատակն էր
համարվել, թէ որպէս կը վերաբերվին նրա գա-
րաճախաւոր և եւրօպական մեծ պետութիւնների
թագաւորները: Պատմում են, որ Աւստրիայից,
Անգլիայից և Իտալիայից երկրորդ պատասխան-
ներ ստանալով, որոնց կարելի էր մի փոքր բա-
րեյաջող մտքով թարգմանել, իսկ Գերմանիայից
մի այնպիսի պատասխան ընդունելով, որ ոչինչ
լաւ բան չէր խոստանում, կոմս Դամբոր մանա-
ւանդ հետաքրքրվում էր Պետերբուրգից եկած պա-
տասխանին, և այդ պատասխանը, իր բաժնական
ձեռք, ստիպեց նրան իսկին հրաժարվել իր մը-
տաղոված ձեռնարկութիւնից: Հէնց այն ժամա-
նակը բարձրացրին դրօշակի մասին հարցը, կա-
տարելապէս հաւատացած լինելով, որ մարշալ
Մակ-Մահոն չի համաձայնվի փոխել երեքգոնեան
դրօշակները սպիտակի: Յրանսիական հանրապե-
տականները, որոնք նորերումս իշխան ժեքով Բո-
նապարտի մանիֆէստի առիթով բարձրացրին
«գաս ակնկալողների» մասին հարցը, իսկապէս
աչքի առաջ ունեն ոչ միայն կոմս Դամբորին, որ-
քան Օրլէանեան իշխաններին, և այնքան չեն վա-

խնդում միապետական յեղափոխութիւնից, որքան
հանրապետական իշխանութեան այդ իշխաններից
մէկի ձեռքը անցնելուց: Ամենից վտանգաւորնե-
րը նրանց չըջանում համարվում են Օմալեան
դուքսը և Դարբորեան դուքսը, երկուսն ևս մեծ
ժողովրդականութիւն ունեն զօրքի մէջ: Փարիզի
կոմսից նրանք այնքան չեն վախենում, նախ
այն պատճառով, որ կոմս Դամբորի ուղղակի ժա-
ռանգի տիտղոսը, որ նա ձեռք բերեց 1873 թվին,
սաստիկ արգելում է այդ իշխանին Յրանսիական
Հանրապետութեան նախագահի կուսումը ընդունե-
լու, և երկրորդ, որ փարիզեան կոմսը, կոմս Դամ-
բորի նման, չունի վտանգ և կենդանի բնաւորու-
թիւն: Նշմուրեան դքսի և Ժուստիկեան իշխանի
մասին խօսել անգամ աւելորդ է: Նրանք երկուսն
ևս այնքան ծեր և հիւսնաւոր են, որ անգոր են
յանդուգն ձեռնարկութիւններ սկսելու: Օմալեան
դքսի մասին ասում են, որ կարող է վտանգաւոր
հակառակորդ լինել Յրանսիայի այժմեան կառա-
վարողների դէմ: Այդ իշխանը 61 տարեկան է:
Նա լաւ պահպանվել է: Ոչինչ չէ դրում նրան
հեռու պահել իրան իշխանութեան գլուխ կանդ-
նելու փորձից, որպէս նա մինչև այժմ ևս
1830 թվի յեղափոխութիւնը համարում է կառա-
րելապէս օրինական գործ, որպէս «ժողովրդական
կամքի» արտայայտութիւն, հրաւիրելով Օրլէանեան
Լուի-Ֆիլիպի պալատի կառավարել Յրանսիան: Եթէ
նոյն ժողովրդական կամքը կը կանչի այժմ Օմա-
լեան դքսին հանրապետականութեան նախագահի պաշ-
տօնի վրա ազգային ժողովի վճռով, դուքսը երե-
ւի ոչինչ արգելք չի դնի հպատակվելու այդ
կամքին: Այս բոլորի ստանդներ մասամբ բացառ-
ւում են, թէ ինչի շատ հանրապետականներ այ-
ժմ այդպէս կուսանում աշխատում են Օրլէանեան
իշխաններին զրկելու այն իրաւունքներից, որ ու-
նեն Ֆրանսիայի բոլոր քաղաքացիները, բայց չը
նայելով դրան, պ. պ. Ֆոլէ, Ֆարք և նրանց հա-
մախոհները, վերին աստիճանի անպրոջ են վար-
վում առանց որ և է կարելի նախաձեռնել սկսելով
Օրլէանեան իշխանների դէմ և բարձր ազգայնի-
ւով այն վտանգի մասին, որ իրը թէ սպառնում
են երկրին միապետականների մտադրութիւնները:
Ճիշդ է թէ սխալ է, բայց Ֆրանսիական հասարա-
կական կարծիքը այդ վտանգին չէ հաւատում: Այն
ժամանակ երբ կառավարութիւնը, պատգամաւորնե-
րի ժողովը և սենատը յուզվում են և տաքանում են
երկու երեք գնեցաւների և քնդապետների պատ-
ճառով, որոնք պատկանում են Օրլէանեան իշխա-
նների ընտանիքին, երկիրը բողոքում է հանդիսաւ
մնում, և արեւմտեան նահանգների ամենալաւ քա-
ղաքներում, ընտիրները զարմանում և ծիծաղում
են, կարգալով օրինականների դաւադրութիւնների և
գնեցաւ Դարբորի «գեղեցիկների» մասին պատմու-
թիւնները: «Folies»

ՄԵԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏՈՐԻԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՒՆՑ

ՓԱՐԻՑ, 1 փետրվարի: Այսօր պատգա-
մաւորների ժողովին ներկայացվեցաւ սենա-
տից փոփոխած օրինագիծը արքայազն իշ-
խանների մասին: Աղմկալի վիճարանու-
թիւններից յետոյ օրինագիծը յանձնվեցաւ
երկրորդ քննութեան համար այն մասնա-
ժողովին, որ նրան մշակեց: Ընդհանուր
համոզմունքը համեմատ պատգամաւորների
ժողովը կը մերժէ սենատի առաջարկութիւ-
նը: Միմիտութիւնը հրաժարական տուեց:
Կարծում են, որ նոր օրինութեան կազմե-
լը Գրեյի կը յանձնի Ֆրէյսին:

ՓԱՐԻՑ, 1 փետրվարի: Սենատը երեկ
ձայների նշանաւոր բազմութեամբ մերժեց
արքայազն իշխանների մասին օրինագիծի
առաջին և երրորդ յօդուածները, որոնք
վաւերացրած էին պատգամաւորների ժող-
վից: Երկրորդ յօդուածը փոխարինված է
վաղգինդոնի և Լէոն Սէյի առաջարկած
լումբարդութեամբ, որի համեմատ Յրան-
սիայի մէջ մի ժամանակ թագաւորող տան
անդամները, որոնք կը գործեն պետութեան
ապահովութեան դէմ ենթարկվում են դա-
տաստանի և արքայազն են:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԻՐՈՒՆԻ

Типогр. Главн. Упр. Главнотач. гражд. час., Лор.-Мелик. ул. кав. д.